ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԽԱՉՓԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Խաչփար համայնք,
գ.Խաչփար 7-րդ փողոց թիվ 6,հեռախոս՝ 098777709,
էլ. փոստ՝ khachpar.gyughapetaran@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«23» հուլիսի 2013 թվականի № 16-Ն

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 17-Ի «2013 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՎ «ԾԻԾԵՌՆԱԿ» ՄՍՈՒՐ-ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀՈԱԿ-Ի ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» № 38-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ մասերի,«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 26-րդ կետի և «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի պահանջներով՝ ավագանին որոշում է.

Համայնքի ավագանու 2012 թվականի դեկտեմբերի 17-ի «2013 թվականի համար գյուղապետարանի աշխատակազմի և «Ծիծեռնակ» մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ -ի աշխատակիցների թվաքանակը,հաստիքացուցակը և դրույքաչափերը հաստատելու մասին» № 38-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

Հավելված 1-ում գրադարանավարի և հավաքարարի պաշտոնային դրույքաչափի այունակի «47.0» թիվը փոխարինել «59.6» թվով,մշակույթի տան տնօրենի պաշտոնային դրույքաչափի

սյունակի «53.0» թիվը փոխարինել «59.6» թվով,պահակի պաշտոնային դրույքաչափի սյունակի «61.0» թիվը փոխարինել «77.500» թվով:

Հավելված 2-ում տնօրենի պաշտոնային դրույքաչափի սյունակի «100.0» թիվը փոխարինել «126.0» թվով, դաստիարակի պաշտոնային դրույքաչափի սյունակի «93.0» թիվը փոխարինել «119.5» թվով, հաշվապահի,երաժշտական դաստիարակի,խոհարարի և դայակի պաշտոնային դրույքաչափի սյունակի «47.0» թիվը փոխարինել «59.6» թվով:

Կողմ(5) Դեմ(0) Չեռնպահ(0)

ԱՐԱՐԱՏ	ԱԼԵՔՍԱՆՅԱՆ	
ՍԵՐԳԵՅ	ԳԵՎՈՐԳՅԱՆ	
ՏԻԳՐԱՆ	ԵՍԱՅԱՆ	
ՏԻԳՐԱՆ	ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ	
ԷԴԻԿ	ՆԱՂԴԱԼՅԱՆ	

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ղ.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ